Ահա, թե ինչու «կոլտնտեսությունների վարչությունների ամենաղլխալուր պարտականությունն և հանդիսանում՝ բրիգա-

գիրներ ընտրել ավելի հեղինակավոր, արտադրությունն իմացող կուտնասությունների, արտադրական առաջադրությունների իրադրուժման շուրջը կազմակերպել կարողացող լավագույն կոլարնատեականներից, մանավանդ հարգածայիններից»:

Մինչեռ Հաստուկ ուշադրություն չի գարձված բրիգադիրի, նրանց  
ընտրության ու վերապատրաստման վրա: Մի շարք կոլտնտեսություններում այժմ մենք բրիգադիրների անհաջող կազմ ունենք: Մի շարք գեպչեր կան, յերբ բրիգադիրներն անդամ գրագետ չեն, տարրական գաղափար չունեն հաշվառման մասին, տարածությունը չափելու մասին (որ Ազատաշեն): Կասկած չկա, վոր անփորձ, անպատճառ բրիգադիրը չի կարող աշխատանքի ճիշտ հաշվառում կատարել, ճշտիվ վրացել, թե ողակներից և կոլտնտեսականներից յուրաքանչյուրն ինչքան տարածության բամբակի քաղցան և արել, կարտոֆիլի բուլք և լոցքել և այլն: Այդ եւ ավելի գժվար և կաթնապրանքային ֆերմաներում, վորտեղ անասունների կշիռը պետք է վորոշել առանց կշեռքի՝ անասունի մարմինը չափելով: Այդ տարրական կանոնները չկատարելու անխուսա-  
փելի հետևանքը կլինի կուլտիւրային հավասարեցումը, քանի վոր այն-  
տեղ, վորտեղ չկա աշխատանքի ճիշտ հաշվառում, չի կարող լինել գործարք, և այդ գեպքում բրիգադն ուղի-չուղի պետք է վորդ յեկա-  
մուտը հավասար բաժանի իր անդամների վրա, անկախ նրանց յուրա-  
քանչյուրի կատարած աշխատանքի քանակից ու վորակից մի բան,  
վորից կտրականապես նախազգուշացնում և ԽՍՀՄ կոլտնտկենտրոնն իր  
վերջին հրահանգում:

Այսպիսով, կոլտնտեկնտրոնի, գյուղական կուսկաղմակերպությունների և կոլտնտեսությունների կարևոր խնդիրներից մեկն ե բրիգադներն ապահովել փորձված, ակտիվ պայքարում և կոլտնտեսական աշխատանքում յիշված ու գրագետ բրիգադիրներով:

Դրան անմիջապես Հանում և բրիգադի հետին արտադրական առաջադրանքներ տալիս նրանց ամբողջ տարբիք գործունեցության համար։ Դեռևս փետրվարին ԽՍՀՄ Կոլտնատկենարունը հրահանգեց՝

«Բրիգադի բներին տալ արտադրասակն պլան—նարյագ, մշակման վեցաբերման սահմանված նորմաներ, ինչպիս և գյուղացիական աշխատանքների ամբողջ ժամանակամիջոցում կատարած աշխատանքը գնահատական աշխարհելով. բրիգադի կողմնականների համար բրիգադի բներին տալ աշխատանքային գրքույկներ, անվանացուցակ, կոլտընտեսականների ամառ. տալ յուրաքանչյուր կուտուրայի մշակման վերաբերող ագրուստիանիկական կանոններ, բրիգադի բներին ծանոթացնել կողմնականների աշխատանքը հաշվառելու կանոնների ու կարգի հետ»:

Մինչդեռ Վաղպատի շրջանի մի շարք կոլտնտեսությունների բրիգադի իրները պարզ հայտարարում են, վոր իրենք չփափան, որինակ, թե վորոշված չափով բերք տալուց իրենք ինչքան աշխոր են ստանալու և վոր բերքը նորմայից բարձր կամ ցածր տալու դեպքում բրիգադի յեկամուտն ինչ հարաբերությամբ ե ինչնելու կամ բարձրանալու:

Գարնանացանի և ապա կուլտուրաների հետազս մշակության Հայամար Հսկայական կարևորություն ունեցող արդ խնդիրը շատ կոլտընեւառթյուններում դեռևս պարզված չէ, իսկ տեղական որդանները Հաճախ պործնականորեն չեն աջակցում կոլտնաեսայիններին արդ գժվարին

ինդրից «գլուխ հանելու» : Վերջերս վիճում եյին նաև այն հարցի շուրջը, թե կոլտնտեսություններում մենք աղաս բրիգադիրներ պե՞տք եռնենանք թե վոչ : Տեղերում այդ հարցում շփոթ ե տիրում : Գուրգուզուլու և Վաղարշատի ըշաններում, որինակի, խոչոր բրիգադների բրիգադիրներին անխտիր աղատում են արտադրական աշխատանքցից : Այդ մասին նույնիսկ կուսչը կամները պաշտոնական վորոշում ունեն : Պարզ է, վոր Ղուրգուզուլու և Ղամարլիք մեր ընկերները բրիգադիրներին արտադրությունից կտրելով, սիալ են զործում : Նրանք տնտեսում են Համ-Կ(ր)կ . Կենտկոմի պարզ ու վորոշակի հրահանգն այն մասին, վոր «բրիգադիրի պատասխանատվության բարձրացումը՝ կոլտնտեսության մեջ աշխատանքի կազմակերպման դործի մի շարք աշխատանքները նրան հանձնելու միջոցով՝ պետք ե ուղեկցվի կոլտնտեսության ընդհանուր վարչական ծախսերի կրնառումով, վորոնք մի շարք դեպքերում անթույլատրելի չափերի յին հասել» :

Սյլ ծախսերն ըստ կողմանակենտրոնի հրահանգի՝ մեծ կոլտնտեսություններում ընդհանուր յեկամտի մեկ ու կես-յերկու տոկոսից չպիտի անցնի, իսկ փոքրերում պետք է լինի 2-3 տոկոս։ Մինչդեռ զուրդուղությունը և վաղապատի մեր ընկերները բրիգադի իրներին աղատելով աշխատանքից՝ մեծ չափերով ծանրացնում են կողմանական ապարատը և մեծացնում վարչատեսական ծախսերը։ Ավելին՝ նրանք ստեղծում են արտադրությունից, կորոնատեսության անմիջական «սև» աշխատանքից կարգած մարդկանց հատուկ խավ՝ մի բան, վոր թե անթույլատրելիք քաղաքական տեսակետից և թե վնասակար՝ տնտեսական տեսակետից։ Յեկ իրոք, վերցնենք Սարգարաբարդի կոլտնտեսությունը։ այդտեղ 26 բրիգադ և ծեալորգած։ Կարել անմիջական արտադրական աշխատանքից թեկուղ դրանց կեսը (վորոնիք անշուշտ ամենափրածված հազարքներ են), նշանակում ե՝ կոլտնտեսական արտադրության «մեջըքը կոտրել»։ Կիրառել զուրդուղություն և վաղապատի շրջանների փորձը, մյուս շրջաններում, նույնպես նշանակում ե մի քանի հազար փորձված, հմուտ կոլտնտեսակների կարել արտադրությունից։ Վո՞չ, այդ թույլատրել չի կարել։ Բրիգադի պետք ե ակտիվ մասնակցություն ունենա բրիգադի արտադրական «սև» աշխատանքներին՝ միաժամանակ կատարելով կլտնտեսականների աշխատանքի հաշվառումը, առաջակատարելությունների տալը և ուժերի դասավորումը։ Բրիգադի հեղինակությունը, ազգեցությունը բրիգադի ներսում (մի բան, վոր շատ կարելու) կախված է վոչ միայն այն բանից, թե նա ինչպես կիազմակերպի աշխատանքը կոլտնտեսության մեջ այլև այն բանից, թե նա ինչպիսի անձնվիրությամբ և յեռանգով կկպչի շաբթային աշխատանքին, «սև արտադրական» աշխատանքին։

«Քրիզպարիստի ամառ աշխարհը, վորպես կանոն, չեն ապաւում: Այդպիսինքը աղատումք, իբրև բացառություն, թույլատրվում է միայն կորտնտեսականների ընդհանուր ժողովը՝ մասնակի հիման վրա»:

Այդ իմաստով ել պետք է լուծել խնդիրը և միջոցներ ձեռք առնել՝ վերջ տալու տեղերում այդ գծով յեղած աղավաղումներին։

ՏԵՂԻՐՈՒՄ պարզ պատեհարցում չկա նաև բրիգադիրի «վարձարարության» հարցի մասին։ Քանի դեռ անհայտ է ամբողջ բրիգադի ստո-

Նալիք աշխորերի քանակը, չի կարող բրիգադիրի ստանալիքը վոր-  
շակի լինել: Այս հարցում մենք ունենք Համկ(ր)կ կենտրոմի պարզ ցու-  
ցամներն այն մասին, վոր՝

«Լայն կերպով պիտի և տարածվի անցյալ տարի լավագույն կոլտնտեսություններում արդեն գործադրվող՝ բրիգադի բների աշխատանիքի վճարումը՝ համաձայն բրիգադի աշխատանիքի վերջնական արդյունքների» և ապա «արտադրական առաջադրանիք հաջող կատարելուց բրիգադի աշխարերի թիվը բարձրանում է, իսկ չկատարելու դեպքում՝ իշխում (ԽՍՀՄ Կոլտնտեսարուն):

Այս ցուցումներով ել պետք է զեկավարվել բրիգադիրների յեկամատը և վրոշչելիս՝ պայքարելով բրիգադիրների «սամանդարտ» աշխարհը սահմանելու պրակտիկայի դեմ, վոր նկատվում է մի շարք կոլանատեսություններում՝ անկախ նրանից, թե բրիգադն իր մշակելիք հոգածականից ինչքան բերք կտա: Յեկ քանի վոր բրիգադիրների յեկամատը կախված է ամբողջ բրիգադի արտադրական գործունեությունից, յուրաքանչյուր բրիգադիր անմիջականորեն շահագրգռված է (թե՛ վոշ կոլանատեսության և թե՛ իր շահի տեսակետից) անմիջապես ձեռնարկել եր բրիգադի հողամասը սերմով ապահովելու աշխատանքը, որին անկելի կերպով կաղմակերպել իր բրիգադի իծկանների և գործիքների խնամքը, աշխատանքը բաժանել բրիգադի անդամների միջև, ողակներին արտադրական առաջարրանքներ տալ, բրիգադի խորհրդակցություններ հրավիրելու քննել «իրենց» հողամասի մշակության կոնկրետ խնդիրները և նոր թափով, նոր յեռանդով դաշտ գուրս գալ:

Զայտի մոռանալ, վոր լավ, հմուտ, գործունեա բրիգադիրը կարող է ապահովել բարձր բերքատվությունը։ Ահա թե ինչու Համեր(բ)կ կենտրոն իր միետքարի 4-ի վարչումով գտնում է, վոր «բրիգադիր-մերի ընտրությունը, նրանց կազմից հոսունության վերացումը և տրնտեսական ու ֆալքական վորակավորման գործում բրիգադիրներին խևական օգնություն ցույց տալը պետք է կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը դառնա»։

ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՈՒԾԻ ԱՂԱՎԱԼՈՒՐՄԱՆ ՁԵՐ

Ս.ջ ոսպորտունիատական տարրերը, հանդիսանալով մեր շարքերում կօւլակի ու դաշնակի ուղղակի ազենտները, ամեն կերպ փորձում էն խեղաթյուրել կուսակցության գիծը բրիգադային աշխատանքի կազմակերպման ասպարիզում։ Այդ արվում և զիլիավորապես բրիգադների կաստայացման և նրանց ներսում մանր-սեփականատիրական տրամադրությունների ուժեղացման ուղղությամբ։ Այն հանդամանքը, վորութանչյուր բրիգադի աշխարերի արեեքը պայմանավորված և նաև նրա աշխատանքի վերջնական արդյունքով՝ առանձին դեպքերում առանձին բրիգադների մեջ «իր» հողամասի բերքին ամբողջովին տիրանալու ձգառում կարող և առաջ բերել, յեթե բրիգադի, կոլանտեսության գեկավարությունն ոպորտունիատական և, յեթե չի ծավալված կոլանտեսականի սոցիալիստական վերադասարկակության գործը։ Մանր-բութուական-կուրակային տրամադրությունների այդորինակ արտահայտություններ մենք տեսանք անցյալ տարի Դուրդուղուվուշ շրջանի Մոլա-Բայազեսի և Արմեթմիլլ կոլանտեսություններում։

Այդ տրամադրությունների հաղթանակը կուտանակության ներսում անխստափելիորեն տանում է զեպի նրա մանրացում, նրա աբոհումն ու անձին մանր անտեսությունների :


Ո՞ԻՐ Ե ՏԱՆՈՒՄ ՈՊՈՐՏՈՒՆԻՑՏԱԿԱՆ ԳՐԱԿՏԻԿԱՆ

Թե ուր կարող ե հասցնել պարտունիստական պրակտիկան, աչք յերեսում ե թեկուզ Արփայի կոլտնտեսության փոքրձից, վորտեղ կուլտ կային տարրերի հետ մերված «կոմունիստները» պահանջում ելին, վորյուրաքանչյուր բրիգադ ինքը տնօրինի իր հողամասից ստացվող արգյունքը։ Հայտնի յե, թե կոլտնտեսության ննտեսական կյանքն այդպիսի կուլտակային պլանի վրա խարսխող ոպրտունիստները քաղաքական տեսակետից ինչպիսի արագ եվլոյուցիա կատարեցին դեպի կուլտ կային-դաշնակցական հակածդափոխական բանակը։

Կոլտնասխանմի աշխատողների վոմանց այն առաջարկը, թե  
բրիգադն իր արտադրական պլանով նախատեսված չափից ավելի բնորո  
տալու գեղջում բերքի այդ «հավելյալ» մասը տնօրինելու իրավունք  
ունի, — իր բնույթով մի քիչ մոտենում և Արփայի ուղղութունսկերեւ  
(իսկ հետադայում հականդավորականների) առաջարկին։ Վոր կու-  
լակային այդ պլակատիկան կոլտնտեսությունները մանրացնում ու տա-  
նում են դեպի հետ՝ անհատական տնտեսություն, յերեսում և թեկուց  
Սարգարբարդի նախկին կոմունայի փորձից։ Այդուն յուրաքանչյուր  
բրիգադ տնօրինում եր իր հողամասի բերքը։ Այնուհետև բրիգադը հե-  
տողհետև մանրանալով վերածվեց ընտանիքների մանր խմբակցու-  
թյունների, վորոնք կոմունայից տնտեսական կախում գրեթե չունենին,  
քանի վոր մի քանի ընտանիքներից բազկացած այդ «ողակներից» յու-  
րաքանչյուրը մշակում եր կոմունայի ունեցած բոլոր կուլտուրաններից, ուներ իր սեփական անասունները, գործիքները, ինվենտարը։ Այս ար-  
դեն անհատական տնտեսությունն և՝ մի քիչ ձևափոխված։ Այս թե-  
ուր և տանում աջ ուղղութունսկան արակտիկան։

Վեղիի շրջանի մի շաբթ գյուղերում կատարված առանձին սիստեմուն նույնպես իրենց բնույթով աջ ոպորտունիստական են: Մենք վերը մուս ասացինք, վոր Վեղիի մի քանի գյուղերում կոլտնտեսական յուրաքանչյուր ըրիկադ զբաղվում ե կոլտնտեսության մէջ յեղած բոլոր կուլտուրաների մշակությամբ: Բացի դրանից, առանձին գեղարքուր կան, յերբ բրիգազներում միանում են մի թայֆայի մարդիկ, իսկ այդպիսի բրիգազների վորոշ ողակներ մի-մի ընտանիքից են բաղկացած: Այդ ընտանիքի—ողակներից յուրաքանչյուրը ձգուում ե աշխատեցնել այն լծկանը, վոր ինքը միացրել ե կոլտնտեսության լծկաններին, բանեցնել իր նախկին գործիքները, վոր այժմ կոլտնտեսության սեփականությունն են համդիսանուում:

Բնական ե, վոր այդ հիմունքներով կազմված ողակներից յուրաքանչյուրը ձգտում է մշակել իր նախկին Հողը, Այստեղից լույսի նման պարզ ե, վոր մենք այդ գյուղերում, աշխատանքի արդորինակ կազմակերպման մեջ կուտանսությունները կմանրացնենք, կվերածենք առանձին անտեսությունների: Այն ողակը, վորտեղ աշխատում են մեկ ընտանիքի անդամներ, վորտեղ աշխատում են բանություններին յեղը՝ նախկին գութանով, այդ ողակից մինչև անհատական անտեսությունը մի քայլ



և մնում միայն, խոկ արդպիսի քայլ հեշտությամբ կարելի յէ անել ոպորտունիստական զեկավարություն ունեցող և դեռևս չամբացած կուլտնտեսություններում, մանավանդ այն դեպքում, յերբ յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր ողակ ամբողջ կոլտնտեսությունից մեծ չափերով անտեսապես անջատված ե, քանի վոր նրանք ունեն ունիվերսալ ինքնուրույն տնտեսություն։ Աղդակցական հիմունքներով բրիգադներ կազմակերպելու փորձեր մենք տեսել ենք Կոտայքի ըլջանի չորս գյուղերում (Աղդակցար և այլն)։ Ինչ խոսք, վոր արդ սկզբունքի կիրառումը թշնամուն միայն կարող և աջակցել, վոր բրիգադների ծիչնե համերաշխ գործունելությունն չի լինի, կբացակայի աշխատանքային դիտցիալինան բրիգադի ներսում, կբացակայի փոխադարձ հսկողությունը, գործը կլատարի տնալվարի, հաճախ առանց հաշվառման, առանց վորակի (գժվար թե բոլոր զեկություն ընտանիքի մի անդամը մյուսին ատիպի բարեխիղճ և լավորակ աշխատել)։ Այդ հենց կոլտնտեսության կործանման ուղին ե, վորից պետք ե խստորեն զգուշացնել մեր գյուղական աշխատաղողներին։

ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծ վտանգ ե պարունակում նաև մինչեւ այժմ շատ կոլտնտեսություններում տեղ գտած՝ բրիգադներն ըստ քաղերի կազմակերպելու պրակտիկան։ Այստեղ հիմնական վտանգներից մեկն այն է, վոր բազմաթիվ մասնադիմություն ունեցող կոլտնտեսականներ ստիպված են մի բրիգադում, մի կոլտուրայի մշակությամբ զբաղվել լոկ այն պատճառով, վոր մի թաղում են ապրում։ Այսպես, որինակ՝ Աշտարակի շրջանի Փարբի գյուղի «Ավանդարդ» կոլտնտեսության մեջ անցյալ տարի բրիգադները կազմվեցին ըստ թաղերի։ Դուրս յեկավ, վոր այն թաղի բրիգադը, վոր զբաղվում եր այդիների մշակությամբ, իր կազմում ունի հմուտ ծխախոտագործներ, մինչդեռ ծխախոտ մշակում եր մյուս թաղամասի բրիգադը, վորի կազմում քիչ չելին հմուտ այդքառօճներ։

Այդ սխալի ռեցիզիվներ այժմ ել ունենք (որինակ՝ Ն. Խաթունար-խովմ բրի բաղներն ըստ թաղերի կազմակերպելու տենդենցիներ են նկատվել), վորին պետք ե անխնա հարգածել: Բրիգադները պետք ե կազմել կրողին արտադրական սկզբունքով և պետք ե աշխատել կոլտնտեսականներից յուրաքանչյուրին ոգտագործել իր մասնագիտության համաձայն, վորը կոլտնտեսական աշխատանքի արտադրողականության համար խռո,որ նա,անակություն կունենա:

Եւրիու խոսք մի ուրիշ սխալի մասին :

Ստեփանավանի շրջանի մի քանի կոլանտեսություններում կադարձակերպվել են վարողների, ցանողների, փողխողների առանձին-տուանձին բրիգադներ : Նույնիսկ կարտոֆիլ ցանողները կենտրոնացված են առանձին բրիգադում : Թվում ե , թե այդ կոլանտեսությունները վորոշիմաստով ճիշտ են վարվել , քանի վոր յուրաքանչյուր կոլանտեսական կաշխատի իր մասնագիտության համաձայն (վարողներն առանձին , ցանողներն առանձին և այլն) : Սակայն յերբ խնդրին նայում ենք անցյալը տարվա դասերի տեսակետից , իսկույն յերեսում ե , վոր աշխատանքի այդ ձևը խորացնում ե զիմայրիկությունը և հանդիսանում է կենտրոնացված :

գիրեկատիվի կոպիտ աղավաղումը։ Յեկ իրոք՝ ինչ կստացվի, յեթե  
մէնք խրախուսենք ու մասսայականացնենք Գյուլազարակի, Վարան-  
ցովկայի և մյուս գյուղերի այդպիսի փորձը, ինչպես արեց Ստեփա-  
նավանի շրջանային թէրթը\*): Կստացվի այն, վոր վար անողը, վոր  
մինչև վերջ ամբացված չե այդ հողամասին, անմիջականորեն ու մին-  
չև վերջ շահագրգուված չի լինի վորակով վար կատարելու, և շատ  
աշխոր ստանալու ձգտուածով կընկնի քանակի հետեւց։ Նույնը և սեր-  
մացանը, փոցիսողը, բուկ տվողը և այն։ Ուրեմն, այդ սեղոնային  
բրիգազները մինչև վերջ պատասխանատու չեն լինի վորոշ հողամասի  
մշակության ու բերքի համար։ Բրիգազը, լավ թէ վատ, մի վորեն  
գործ (որինակ՝ միայն ցանելը) կկատարի, իր աշխորերը կստանա և  
կանցնի, անկախ նրանից, թէ այդ հողամասերում լավ բերք կլինի<sup>o</sup>, թէ  
վո՞չ։ Այսպիսի պայմաններում կարելի<sup>o</sup> յե վորոշել, թէ վոր բրիգազն  
և ցած բերքի պատճառը՝ վարո՞ղ բրիգազը, ցանո՞վը, թե՞ մի ուրիշը։  
Վո՞չ, հնարավոր չե։ Ուրեմն՝ նորից հովի գիմազրկություն, նորից  
պայմաններ են սետղվում ցածը բներքատկության համար, անտնտե-  
սավարության համար, անփուլթ ու անխնամ գործի համար։ Աշխա-  
տանքի այդ ձևը տարածված ե մի շաբք այլ կոլտնտեսություններում  
նույնպես, վորի գեմ պետք ե անխնա կովի զղել ու դեն շպրտել՝ վոր-  
պես անպետք, վնասակար և թշնամուն աշակցող աշխատանքի ձև։

Բըրիգաղները բոլոր կոլտնտեսություններում պետք է կազմակերպ վեն կենտկոմի վերոհիշյալ ցուցման հիման վրա։ Ծուրաքանչյուր բրիգադ պետք ե ամրացվի մեկ հողամասի և նրա մշակության բոլոր պրոցեսների համար պատասխանատու լինի։ Բըրիգաղի յեկամուտը պետք ե բարձրանա կամ ցածրանա նայած այն բանին, թե ինչքան բերք կստացվի բրիգադի մշակած հողամասից։ Այսպիսով, բրիգադը մինչև վերջ շահագրգուկած ե լինում ինամքով ու վորակով կատարել թե վարը, թե ցանքը և թե կուլտուրայի մշակության հետագա պրոցեսները և նույնիսկ բերքահավաքը, կալմելը։ Ավելին՝ բրիգադը նույնիսկ շահագրգուռված է, վոր ժամանակին հայթայթվի «իր» հողամասին անհրաժեշտ սերմացուն, իր բրիգադին անհրաժեշտ ինվենտարը։ Յեզի իրոք՝ Հյուսիսային Կովկասի և Ն. Վոլգայի ըրջանների բարմաթիվ կոլտնտեսություններում նկատվում ե այդ յերեսույթը։ Նոր կազմակերպված բրիգադները միջոցներ են ձեռք առնում «փրենց» հողամասը սերմացվով ապահովել, բրիգադի անդամներն իրենց տներում յեղած սերմացուն փոխ են տալիս կոլտնտեսությանը և ապահովում են «փրենց» բրիգադը սերմով։ Դրանով ապահովվում ե վոչ միայն բրիգադի և ամբողջ կոլտնտեսության շահը, այլ իր՝ կոլտնտեսականի անմիջական շահը։ Կոլտնտեսականների մասնավոր շահն այդ ձեռք զուգորդելով ընդհանուր, կոլեկտիվի շահերին, պետք ե ուժեղացնել կոլտնտեսականների շահագրգուվածությունը բերքատվության բարձրացման և կոլտնտեսական այսատանքի արտադրողականության համար պայքարելիս։

\*.) Ասում են, վոր վոչ թե դյուդերում են սխալ կաղմակերպվել բրիգադները, այլ շրջանային թերթն են նրանց փորձը սխալ վերարտադրել։ Յեթև նույնիսկ այդպես եւ լինի, դրանից յերեսում են, վոր այդպիսի սխալ տեսնդէնդներ կան բրիգադների կազմիկերպման գործում։

Տեղերում շվիթ կարծիք կա նաև Հետեւյալ հարցի ըստը, — ինչ-  
պէ՞ս վարդէլ, յերբ արտադրական բրիգադը գերակատարում կամ թե-  
րառնահատում ե իր արտադրական պլանը։ Հայոնի յէ, վոր կոլանտե-  
ռական յուրաքանչյուր բրիգադ գարնան բկզբին ստանում ե արտադրա-  
կան առաջադրանք, վորով պարտավորվում ե մշակել այսքան տարա-  
ծություն և տալ այսքան բերք։ Դրա դիմաց Հենց սկզբից կունկակիվը  
պարտավորվում ե այդ բրիգադին տալ այսքան աշխոր (իհարկե, այդ  
տարածության մշակության համար ծախսվելիք աշխատանքը հաշվե-  
լուց հետո)։ Մինչեւ այժմ տիրում եր այն տեսակետը (թե՛ կենտրոնում  
և թե՛ մասմասում), վոր կոլանտեսական բրիգադի աշխորերի թիվը  
պետք ե իջնի կամ բարձրանա՝ նայած թե բրիգադն ինչպէս ե կատարել  
եր արտադրական առաջադրանքը և ինչպէս բերք ե հանձնել կոլանտե-  
սության։ Մի քանի ընկերներ ել առաջարկում են հետեւյալը.

— Բրիգադն իր պլանը գերակատարելու դեմքում թող իրավունք սննենա իր մեջ բաժանելու այդ «Հավելված» (պլանից դուրս) յեկամուտը ;

Այդ յերկու տեսակնետներն ել սխալ են, մանավանդ վերջինը խիստ գտանգապոր և և վոչ մի կապ չունի կոլտնտեսության սկզբունքների Տես :

Վո՞րն ե ճիշտը: Ճիշտն այն է, վոր պլանը գերակատարող բրիգադի  
աշխարհերն ավելի մեծ արժեք պետք է ունենան, քան թերակատարո-  
ղինը, իսկ կոլտնտեսության մեջ աշխորի միջին արժեքը վորոշվում է  
ամբողջ կոլտնտեսության յեկամտով: Ավելի պարզ՝ ամբողջ կոլտնտե-  
սության յեկամուտը բաժանում են ամբողջ կոլտնտեսության (բոլոր  
բրիգադները միասին վերցրած) ծախսած աշխորերի վրա և գտնում,  
մեկ աշխորի միջին արժեքը: Բայց նույն կոլտնտեսության տարրեր  
բրիգադներում աշխորի այդ արժեքն իջնում կամ բարձրանում նայած  
այն բանին, թե բրիգադներից վորն ինչպես և կատարել իր պլանը: Ո-  
քինակ՝ յեթե աշխորի միջին արժեքը կոլտնտեսության մեջ 2 ուրուի  
յի, նույն կոլտնտեսության մի բրիգադում աշխորը կարող է 2 և կես  
ուրուի արժենալ (յեթե բրիգադը վորոշված չափեց բարձր բերք և  
ավել), մյուս բրիգադում 1 և կես ուրուի (յեթե նորմայից ցած բերք և  
ավել): Կամ:

Ահա թե ինչ և ասում այդ առջիկ «Պրալդան» իր խմբագրական։

«Աշխորերի գնահատություն սահմանել յուրաքանչյուր բրիգադի համար առանձին, յելնելով այս՝ զեղքում նախ՝ կուտնասությաս լողանուր յեկամտից և, յերկրորդ՝ հենց իրեն՝ բրիգադի աշխատանքների արդյունքներից»:

ԿՈՒՄԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԲՐԻԳԱԴ

Արակիսով, անվիճելի յե, վոր այս տարի գյուղատնտեսության ընագավառում և մասնավորապես կոլտնաշխարհարության ընագավառում մեր հաջողությունները կախված կլինեն այն բանից, թե ինչպես են հաջողակա մեջ առնենք ենթակառքի միեւնույն կազմության

ը կոլտնտեսությունների ամբափնդման խնդիրների մասին, թե վորքանով մեր կուսակազմակերպությունները կամբապնդեն կոլտնտեսական բրիգադները, թե վորքան ջցորդեն կկազմակերպվի աշխատանքը, վորքան անշեղորեն կկիրառվի զործարքը բրիգադի ներսում: Այդ տեսակատից կուսակցական աշխատանքի կազմակերպումը բրիգադում առաջնակարգ նշանակություն է ստանում և կուսակցական աշխատանքի կենտրոնը զյուղում: Բրիգադում աշխատանքը կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է, վորքի կազմակերպվեն ճիշտ հետաքններով: Մինչդեռ, ինչպես ասացենք վերեռում, այդ գծով շատ տեղեր կուսակցության գծի կոպիտ աղավաղումներ գոյություն ունեն: Այդորինակ սխաների շտկումը և բրիգադը ճիշտ արտադրական հիմունքներով կազմակերպելը, այդ գործն ամենակարծ ժամանակում աշխարտելլ մեր գյուղակուսկալմակերպությունների առաջին ինդիքտն է: Այսուհետեւ բրիգադում աշխատանքը ճիշտ կազմակերպելու, պլանները կատարելու, կուտանոսեսականներին ամբողջ թափով դեպի գործ մղելու ուսակեալից վճռական նշանակություն ունի կուսակցական կորիզը բրիգադի ներսում: Այսպես վորքի բրիգադները կաղմակերպելիս, կուսակցական ուժերի ամենակարգ գաղափարում պիտի կատարել, վորքը բրիգադներում ապահովի կուսակցական աղյուսությունը, բրիգադները ապահովվեն համապատասխան կուսակցական կորիզով, խմբակով, կազմակերպիչով, վորք կուսակցականները լինեն դաշտում, բրիգադի մեջ անմիջական աշխատողներ, արտադրողներ: Հենց այդ կորիզն է, վորքների կայում դատնում և կուսակցական կազմակերպության հիմնական ուղակը զյուղում: Այդ է, վորք աշխաթողություն էն արել մեր գյուղադիմությունը, բրիգադները ապահովվեն համապատասխան կուսակցական կորիզով, խմբակով, կազմակերպիչով, վորք կուսակցականները լինեն դաշտում, բրիգադի մեջ անմիջական աշխատողներ, արտադրողներ: Հենց այդ կորիզն է, վորքների կայում դատնում և կուսակցական կազմակերպության հիմնական ուղակը զյուղում: Այդ է, վորք աշխաթողություն էն արել մեր գյուղադիմությունը: Այդ խնդիքն է, վորք բավարար ուշադրություն չեն զարձնում մեր կուսակցությունը: Լիովին ու վերջնականապես չի գիտակցված այն բանը, վորք ՄիԱՅՆ ԲԲԻԴԱՐԱՐ կուսակցությունը ԱՇԽԱՍԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ, ՄԻԱՅՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ, ՆՐԱՆՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՍԱՆՔԸ, ՄԵԶ ԿՀԱԶՈՂՎԻ ԻՐԱՊԵՍ ԱՄՐԱՊԴԵԼ ԲՐԻԳԱԴ-9:

Վորո՞նք պիտի լինեն բրիգադն ամբավնդելու այսորվա կոնկրետ միջոցառումները։ Նախ՝ կուսկորիզը բրիգադի բոլոր անդամների մասնակցությամբ պետք է մշակի բրիգադին հանձնված դաշտի մշակության կոնկրետ պլանն այս հաշվով։ Վոր յուրաքանչյուր ողակ, յուրաքանչյուր կոլտանուեական պարզ պատկերացնի իր անելիքը դաշտում ու լուսական առաջարկության մեջ։

կուտկորիփիսէ մյուս կարեռագույն խնդիրն ե՛ ծավալել մասսա-  
յական աշխատանք բրիգադի ներսում և բրիգադի անդամների ուժերով  
կազմակերպել սերմի հայթայթումը, այնպիսի աշխատանք ծավալել,  
վոր կողմանտեսականները կամացոր կերպով փոխ տան իրենց տներում  
ենած սերմառուն:

Կուսկազմակերպիչը, կուսխմբակը պետք է աշխատանք ծավալեն բրիգադին կցված անառունների և հատկապես լծկանների խնամքը կազմակերպելու համար, բրիգադին հատկացված խոտը խնայողաբար ու չափով գործածելու համար։ Յեվ, վերջապես, կուսկորիզը բրիգադուն պետք է կոլտնտեսականներին պայքարի հանի կուլտուրաների մշակության բոլոր պրոցեսներն ըստ ադրբեյխնիմումի կատարելու համար, անոնք է եացմաններին ու գիլիակտի կոլտնտեսականների պայքարը վա-

բակի համար, բարձր բերքի համար: Մեր կուսաքչիջներն իսկի զբաղվել են այդպիսի «ճանր» հարցերով: Շատ քիչ: Դժբախտաբար սերմի, կերի, անսասունների և գործիքների խնամքի, դարու, ցորենի մշակության հարցերը դեռևս շատ ու շատ գյուղերում կուսակցական հարցեր չեն համապնդում: Ասկայն ներկայումս գլխավորապես դրանք են, վոր վրձուում են կոլտնտեսություններն ամրապնդելու խնդիրը, հետեապես՝ վողջ կուսակցական աշխատանքի ուղղ ու ծուծն այդ «ճանր» տնտեսական խնդիրները պիտի կազմեն: Ժամանակն ե, վոր մեր գյուղական և կոլտնտեսական բջիջները վճռական շրջադարձ կատարեն դեպի կոլտընտեսական աշխատանքի և արտադրության կազմակերպման կոնկրետ խնդիրները: Ժամանակն ե, վոր կուսակցական աշխատանքը փոխադրվի ՄՏ Կայանների, խորհուտականությունների ցեխները, տրակտորային ու կոլտնտեսական բրիգադները: Վերընը կայացած հանրապետական կազմի խորհրդակցության վորոշումը՝ գյուղական կուսաշխատանքների վերակառուցման մասին՝ հենց այդ հապատակն ել հետապնդում ե: Խընդիրն այն ե, վոր «Հիմքը ընդունելով կուսակցական ուժերի ճիշտ գասավորումը, արտադրական ճյուղերի վրա կուսակցարության ապահովումը՝ ստեղծենք ամուռ, մշտապես զործող կուսակցական ստորին ողակ (արտադրական բրիգադներ, ողակներ, կուսակցական կազմակերպիչներ), բարձրացնենք գյուղկոմների առաջատար դերը սոցիալատական շինարարության բոլոր բնագավառներում» ՀԿ(բ)Կ կենտկոմ:

### ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Զարդի մոռանալ չափազանց կարեոր մի հանգանք ել՝ այն, վոր կոլտնտեսական սիստեմի աշխատանքների վերակառուցումը Համկ(բ)Կ կենտկոմի վետրվարի 4-ի վորոշման հիման վրա ապահովելու տեսակետից վճռական նշանակություն ունի մեր կուսակցական բրազությունների պայքարը կոլտնտեսականների վորոշ խավերում դեռևս գոյություն ունեցող մանր-բուրժուական սեփականատիրական տրամադրությունների և այդ տրամադրությունների ու կուսակային աղդեցությունների արտահայտության՝ աջ ոպորտունիզմի դեմ:

Կոլտնտեսական մասսաների կոլեկտիվիստական վերադաստիարակության խնդիրները Համկ(բ)Կ կենտկոմի վերոհիշյալ վորոշումով գտնուում են կարել որպագոյն քաղաքական խնդիրը գյուղում:

Այդ պետք ե անել կոլտնտեսական ակտիվի միջոցով, հենվելով նրա վրա: Կոլտնտեսությունների կազմակերպարկան-տնտեսական ամրապնդման խնդիրն առանձին համառությամբ պահանջում է կոլտնտեսական կազմակերպություններից՝ հարվածային կոլտնտեսականներից ստեղծել և դաստիարակել կրտսենական ակտիվ, վորը պետք է հենակետ հանդիսանա կարելորագոյն տնտեսական միջոցառումները կատարելիս, ինչպես են՝ պայքարը բերքի համար, հացամբերման պլանը կատարելու համար, այլև կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակության համար» (Համկ(բ)Կ կենտկոմ):

Այս աշխատանքին պետք ե ձեռնարկեն մեր կուսակցակերպությունները՝ գրա համար գործադրելով թե՛ կուսումուցման ցանցը և թե՛

վոր գլխավորն ե՝ ուժեղացնելով կուսակցական մասսայական աշխատանքը կոլտնտեսականների շրջանում, կազմակերպելով ու գլխավորելով նրանց պայքարը՝ բամբակի, սոցանասնապահության բնագավառում պլանները կատարելու և բարձր վորակական ցուցանիշներն ապահովելու համար:

Այդ մենք պետք ե իրադրենք համառ, վճռական ու ակական պայքարով կուսակային ու մանր բուրժուական ազդեցությունների և դրանց արահաճայություն հանդիսացող աջ ու «Ճախ» ոպորտունիզմի դեմ: Դրան մենք պետք ե հառնենք կոլտնտեսական բրիգադում ծավալությունը լայն մասսայական կուսակցական աշխատանք, ձգտելով ամենակարծ ժամանակամիջոցում յեփել կոլտնտեսականին կոլեկտիվ աշխատանքի կաթուայում:

\* \* \*

Այսպես, ուրեմն, այժմյանից պետք ե վերակազմել բրիգադներն ըստ արտադրական նշանի, ամրացնել նրանց վորոշ հողամասերի, անասունների, գործիքների, վորոշի աշխատանքը նորմաններն այն հաշվով, վոր յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր կոլտնտեսական հենց այժմյանից վորոշակի իմանա իր սնելիքը:

Համ. Կ. (բ) Կ. կենտկոմի վորոշման անշեղ կիրառումն արտադրական նոր ենտուղիազմ կառաջացնի կոլտնտեսական լայն մաստաների ըրջանում և հսկայական չափերով կրաքացնի աշխատանքի արտադրողականությունը դրւղատեսության բոլոր ճրողերում:

Այս և հնամյակի վերջին տարվա պլանների կատարման, գյուղատնտեսության բուրժուատում բոլոր գծերուով վորակական ցուցանիշների աճման դիմավայրականը:

Այս և կոլտնտեսությունները կազմակերպություն ու անտեսապես ամրապնդելով հուսատու ուղին: Հետեապես և այս և գյուղական կուսակցակերպությունների կենտրոնական խնդիրը:



Հեղի բարեկը՝ Ա. ՋԱՐԱՐԵԱՆ

Սրբագրութեր՝ Հ. ԱՄԲԻԿԵԱՆ ԵԵՎ Ա. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Հանձնվոծ և արտադրության 3/IV ար. Ֆ. Ա

Ստորագրված և տպագրելու 15/IV 1932 թ.

C 32  
CA 3

ՏՊՀ



ՀՀ Ազգային գրադարան



NL0207432

30.375